ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- դեկտեմբերի 2022 թվականի № -Ա
ք. Երևան

«ՀԵԼԻՈՍ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա. «ՀԵԼԻՈՍ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2022 թվականի հոկտեմբերի 5-ին վարչական բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով անվավեր ճանաչել Հանձնաժողովի 2022 թվականի օգոստոսի 24-ի №345Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում) և կիրառել Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №88-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի (այսուհետ՝ Մեթոդիկա) 3-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված իրավակարգավորումը, այն է՝ «2019 թվականի հուլիսի 1-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում ուժի մեջ մտնելու դեպքում՝ նշված սակագնի հիման վրա սույն մեթոդիկայի 4-րդ կետում ամրագրված բանաձևով կատարվող ճշգրտումների արդյունքում ձևավորված մեծությանը հավասար»՝ Ընկերության նկատմամբ վարչական ակտի տեսքով սահմանելով 25.052 ՀՀ դրամ/կվտժ սակագինը՝ առանց ավելացված արժեքի հարկի:

Ընկերությունը մատնանշելով Սահմանադրության 73-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի, 20-րդ հոդվածի 2-րդ մասի, 30-րդ հոդվածի 2-րդ մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի իրավանորմերը, որպես վերոհիշյալի հիմնավորում նշել է, որ Որոշմամբ Հանձնաժողովը խախտել է նորմատիվ իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության կանոնները՝ հետադարձ ուժով օժտելով վատթարացնող իրավական նորմին, որպիսին է՝ Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությունը, Որոշմամբ խախտվել են Ընկերության՝ էլեկտրական էներգիայի արտադրությունն ապահովելու նպատակով առաջացած իրավահարաբերությունների ծագման պահի դրությամբ եղած լեգիտիմ ակնկալիքները՝ Ընկերության պնդմամբ, Ընկերության նկատմամբ ոչ իրավաչափորեն չկիրառված մասով: Ընկերությունը միաժամանակ պնդել է, որ Ընկերությունն օրենսդրությամբ սահմանված ժամկետում Հանձնաժողով է ներկայացրել դրական փորձագիտական եզրակացություններով «Հելիոս-2» արևային էլեկտրակայանի (Արագածոտնի մարզի Արագածոտն համայնքի վարչական տարածք) (այսուհետ՝ Կայան) կառուցման նախագիծը, որտեղ արդեն իսկ ներկայացված է եղել փոփոխված տարբերակով տեխնիկական պայմանը: Ի պատասխան ներկայացված նախագծի՝ որևէ դիտարկում տեխնիկական պայմանի փոփոխման վերաբերյալ Հանձնաժողովի կողմից չի հայտնվել: Բացի այդ, Ընկերությունն անընդունելի է համարել, որ վարչական մարմինը նման իրավակարգավորումը կիրառելու փաստը դիտարկում է որպես Ընկերության կամ Հանձնաժողովի համար ընտրության հնարավորություն, այսինքն՝ կամ տնտեսվարող սուբյեկտը չի կատարում որևէ գործողություն՝ ուղղված նախնական տեխնիկական պայմանում կամ հողատարածքի փաստաթղթերում փոփոխություն կատարելուն (նույնիսկ եթե այդ փոփոխությունը բխում է բոլորովին օբյեկտիվ հանգամանքներից) և ստանում է սակագին՝ առանց 0,9 գործակցի, կա՛մ կարողանում է կատարել համապատասխան փաստաթղթերում փոփոխություն և ստանում է սակագին՝ 0,9 գործակցով:

բ. հարուցվել է Որոշման վերաբերյալ Ընկերության բողոքի քննարկման վարչական վարույթ, ինչի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 7-ի №ԳԲ/34.3-Մ2-7/3487-2022 գրությամբ,

գ. իրականացված վարույթի շրջանակում հաստատված է համարվել, որ՝

1) Որոշման իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից.

- «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետ, համաձայն որի Հանձնաժողովն իրավասու է սահմանելու էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության, էներգետիկայի բնագավառում հաղորդման (փոխադրման), բաշխման, համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի և շուկայի կանոններով սահմանված համակարգային ծառայությունների սակագները.
- Որոշման ընդունման պահին գործող՝ Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերություն (ներկայումս Հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 29-ի №520-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկայի 42-րդ կետի 7-րդ ենթակետ), համաձայն որի Մեթոդիկայի 7-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինն առաջին անգամ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում սահմանվելու պարագայում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած՝ փաստաթղթերով ներկայացված կայանի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքի (բացառությամբ կայանը էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ օդային գծերի, հենասյուների, հաշվառման համակարգի, բաշխման ցանցին միացման կետում այլ օժանդակ սարքավորումների տեղադրման համար անհրաժեշտ հողատարածքի) փոփոխման (ընդլայնման) կամ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման լարման փոփոխման դեպքերում՝ սահմանվում է Մեթոդիկայի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն համապատասխան ժամանակահատվածի համար ձևավորված մեծության և 0.9 գործակցի արտադրյալին հավասար,

- Հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 25-ի №217-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետի «բ1» պարբերություն, համաձայն որի Մեթոդիկայի 1-ին կետի 7-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նշված արևային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքերի առկայության պարագայում և էլեկտրական էներգիայի արտադրության փուլ անցնելու (լիցենզիայում համապատասխան փոփոխություններ կատարելու), սակագին սահմանելու համար Հանձնաժողովի հաստատած կարգերով նախատեսված գործողությունները կատարելու և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը պատշաճ կարգով մինչև 2022 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ Հանձնաժողով ներկայացնելու դեպքում՝ 22.547 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի,

2) Որոշումն ընդունվել է օրենքներին ու գործող այլ իրավակարգավորումներին համապատասխան, ուստի դրա վերանայման հիմքերը բացակայում են: Մասնավորապես Հանձնաժողովի 2020 թվականի ապրիլի 1-ի №106Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրվել է Կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0674 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա): Ընկերությունը, Լիցենզիայի ստացման հայտում, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացրել է նաև 2019 թվականի դեկտեմբերի 3-ի էլեկտրաէներգետիկական համակարգին միացման №ՏՊ-200-110/1375-Հ նախնական տեխնիկական պայմանը և Կայանի կառուցման (շահագործման և սպասարկման) համար անհրաժեշտ 9,93155 հա հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցման №18022020-02-0022 վկայականը: Ընկերությունը, 2022 թվականի օգոստոսի 5-ին Կայանում էլեկտրական էներգիայի արտադրության փուլ անցնելու նպատակով, Հանձնաժողով է ներկայացրել Լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու վերաբերյալ դիմում, ինչպես նաև սակագնի սահմանման հայտ, որով խնդրել է Ընկերության Կայանից էլեկտրական էներգիայի արտադրության սակագինը սահմանել 25.052 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի: Ընկերության կողմից, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի մայիսի 20-ի էլեկտրաէներգետիկական համակարգին միացման №ՏՊ-200-

110/1375-Հ տեխնիկական պայմանը, համաձայն որի՝ փոփոխվել են բաշխման ցանցին էլեկտրակայանի միացման լարման պայմանները՝ նախկին 110 կՎ-ի փոխարեն դառնալով 10 կՎ: Ընկերությունը 2022 թվականի օգոստոսի 10-ի գրությամբ ներկայացրել է նաև Կայանի շահագործման և սպասարկման համար անհրաժեշտ 10.13155 հա հողամասի և դրա վրա կառուցված Կայանի նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցման №08082022-02-0017 վկայականը: Ուստի, հաշվի առնելով նշված փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ Ընկերության Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանվել է 22.547 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի՝ հիմք ընդունելով Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությունը, ինչպես նաև Հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 25-ի №217-Ն որոշումը:

Անդրադառնալով Ընկերության փաստարկներին՝ Հանձնաժողովը գտնում է, որ դրանք անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

- Հանձնաժողովի կողմից Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությունը՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոններին հակասող եղանակով կիրառելու վերաբերյալ Ընկերության շարադրած փաստարկների առնչությամբ հարկ է նշել, որ դրանք, Հանձնաժողովի գնահատմամբ, ընդհանրապես կիրառելի չեն սույն հարցի նկատմամբ, քանի որ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի վերաբերյալ կանոնի կիրառման համար անհրաժեշտ նախադրյալները կամ հանգամանքները տվյալ դեպքում առկա չեն: Մասնավորապես, Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 73-րդ հոդվածին համապատասխան՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն, իսկ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և

այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանն անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի կանոնի էության և կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ դիրքորոշումներ է արտահայտել իր մի շարք որոշումներով (Տե՛ս, օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի ՍԴՈ-649, ՍԴՈ-723, ՍԴՈ-758, ՍԴՈ-881, ՍԴՈ-1000, ՍԴՈ-1061, ՍԴՈ-1142, ՍԴՈ-1224, ՍԴՈ-1326 ՍԴՈ-1437 որոշումները): Նորմատիվ իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության արգելքի վերաբերյալ նշված կանոնի կիրառման ընդհանուր մոդելը կամ նշված կանոնի կիրառման համար անհրաժեշտ ընդհանուր նախադրյալները հանգում են հետևյալին.

ա) իրավունքի սուբյեկտը որոշակի պահի դրությամբ ունենում է կոնկրետ իրավանորմի բովանդակությանը համապատասխանող կամ դրանից բխող որոշակի սուբյեկտիվ իրավունքներ ու պարտականություններ (իրավական վիճակ),

բ) նշված իրավանորմի բովանդակությունը վերը նշված և արձանագրված պահի համեմատ կրում է բովանդակային փոփոխություն,

գ) նշված բովանդակային փոփոխությունն ունենում է վատթարացնող ազդեցություն իրավունքի սուբյեկտի իրավական վիճակի (իրավունքների ու պարտականությունների ամբողջության) նկատմամբ:

Ընդ որում, վերը նշված «ա» և «բ» կետերում նշված նախադրյալները ենթակա են ուղղակի արձանագրման, իսկ «գ» կետում նշված նախադրյալի առկայությունը ենթակա է գնահատման: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ միայն նշված բոլոր նախադրյալների առկայության պայմաններում կարող է քննարկվել տվյալ պարագայում հիշյալ կանոնի կիրառման հնարավորությունը: Այլ կերպ, վերոնշյալ բոլոր նախադրյալների առկայությունը հաջորդաբար ստուգելուց և ամբողջության մեջ բոլոր նախադրյալների առկայությունը փաստելուց հետո միայն կարելի է քննարկել հետադարձ ուժի արգելքի կանոնի կիրառման անհրաժեշտության հարցը: Տվյալ դեպքում խնդրո առարկա նորմը նախատեսված է Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությամբ: Մեթոդիկայի 1-ին կետի համաձայն՝ նույն մեթոդիկայի

համաձայն հաշվարկվում են նաև Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող արևային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Հարկ է նշել, որ Հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի №359-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը (այսուհետ՝ Սակագների կարգ): Քննարկվող իրավահարաբերությունների ծագման պահին գործող՝ Սակագների կարգի 1-ին կետի համաձայն՝ նույն կարգը սահմանում է էլեկտրական էներգիայի (հզորության) և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ համակցված), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման), բաշխման, մատակարարման (այդ թվում՝ երաշխավորված մատակարարման), էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման, էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի օպերատորների լիցենզիա ստանալու հայտ ներկայացնող կամ լիցենզիա ունեցող անձանց սակագների սահմանման ու վերանայման գործընթացը: Հարկ է նշել, որ նշված կարգը Ընկերության համար կիրառելի է այնքանով, որքանով կարգավորում է արդեն լիցենզիա ունեցող ընկերությունների համար սակագների սահմանման ու վերանայման ընթացակարգն ու գործընթացը: Նշված կարգի բովանդակությունից բխում է, որ էներգետիկայի բնագավառում սակագների սահմանումն ու վերանայումն իրականացվում են սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ հայտի քննարկման ու համապատասխան որոշում ընդունելու միջոցով, բացառությամբ նույն կարգի 3-րդ բաժնով նախատեսված՝ Հանձնաժողովի նախաձեռնությամբ սակագների վերանայման դեպքերի: Ըստ այդմ, սակագնի սահմանման հայտ ներկայացնելու ուժով լիցենզավորված սուբյեկտի ու Հանձնաժողովի միջև առաջանում է վարչարարական իրավահարաբերություն՝ ներկայացված հայտի՝ Սակագների կարգին համապատասխանության ու հայտի ընդունելիության և սակագնի սահմանման կամ վերանայման առնչությամբ, որը կարող է եզրափակվել հայտն ուսումնասիրության չընդունելով, ուսումնասիրության ընդունված հայտի մերժմամբ, ինչպես նաև սակագնի սահմանման կամ վերանայման մասին որոշում ընդունելով: Նշված իրավահարաբերության բովանդակությունն է կազմում, մի կողմից՝ լիցենզավորված

անձի իրավունքը՝ ստանալ նորմատիվ ակտերին ու կարգավորումներին համապատասխանող սակագին, իսկ մյուս կողմից՝ Հանձնաժողովի համարժեք կամ հանդիպական պարտականությունը՝ սահմանել նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխանող սակագին: Վերոշարադրյալ վերլուծությունների համատեքստում Հանձնաժողովը փաստում է, որ տվյալ դեպքում Ընկերությունն էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման համար հայտ է ներկայացրել 2022 թվականի օգոստոսի 5-ին, և սակագնի սահմանման հայտի ուսումնասիրության (վարչարարության) արդյունքում արդեն ընդունվել է վիճարկվող որոշումը: Այսպիսով, Մեթոդիկայի կիրառելիության առնչությամբ իրավահարաբերությունները տվյալ դեպքում ծագել են 2022 թվականի օգոստոսի 5-ից՝ ուսումնասիրության ընդունված հայտի ներկայացման պահից: Հանձնաժողովը փաստում է, որ Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությունը նախատեսվել է Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի №348-Ն որոշմամբ, որն ուժի մեջ է մտել 2020 թվականի հոկտեմբերի 6-ին, այսինքն՝ Որոշման կայացմանն ուղղված իրավահարաբերությունները ծագելու պահից շուրջ 20 ամիս առաջ: Նման պայմաններում Հանձնաժողովը փաստում է, որ Ընկերության իրավական վիճակը վատթարացնող իրավակարգավորման՝ ենթադրաբար կիրառման վերաբերյալ Ընկերության փաստարկները կիրառելի չեն վիճարկվող որոշման մասով, քանի որ խնդրո առարկա իրավանորմն ուժի մեջ է մտել նշված իրավահարաբերությունների ծագումից ավելի վաղ: Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերության՝ հետադարձ ուժի արգելքի կանոնի խախտմամբ կիրառված լինելու հարց տվյալ դեպքում նույնիսկ չի կարող քննարկվել:

- Ընկերության կողմից իրավահարաբերությունների ծագման պահը Լիցենզիայի տրամադրման պահով (2020 թվականի ապրիլի 1) պայմանավորելու հետ կապված փաստարկների առնչությամբ հարկ է փաստել, որ Լիցենզիան տրամադրելու պահի դրությամբ գործող՝ «Լիցենզավորման մասին» օրենքի 3-րդ հոդվածով լիցենզիան սահմանվել է որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ: Նույն պահի դրությամբ գործող՝ «Էներգետիկայի մասին» օրենքի

35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձին տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում էլեկտրական էներգիա արտադրող կայան (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայան) կառուցելու (վերակառուցելու), էլեկտրական էներգիա (հզորություն) արտադրելու և շուկայի կանոնների համաձայն մեծածախ շուկայում այն վաճառելու կամ արտահանելու իրավունք, ինչպես նաև այն դեպքերում, երբ արտադրողը սեփական արտադրության էլեկտրական էներգիայով չի կարողանում կատարել իր պայմանագրային պարտականությունները՝ այդ նպատակով էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիա գնելու իրավունք: Տվյալ դեպքում Հանձնաժողովի 2020 թվականի ապրիլի 1-ի №106Ա որոշմամբ որոշվել է Ընկերությանը տրամադրել Կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2042 թվականի հունվարի 2-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2022 թվականի հունվարի 2-ը: Տվյալ որոշմամբ ճանաչվել է Ընկերության իրավունքը կամ հնարավորությունը՝ զբաղվել «Էներգետիկայի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործունեության տեսակով. դա բխում է օրենսդրությամբ լիցենզիայի նախատեսման իրավական նպատակներից, քանի որ լիցենզիան, իրենից ներկայացնելով իրավունքի ոլորտում որոշակի գործունեությամբ զբաղվելու հանրային իրավական թույլտվություն, կոչված է ճանաչելու իրավունքի առկայությունը՝ զբաղվելու որոշակի գործունեության տեսակներով: Այլ խոսքով, լիցենզիան վերաբերում է իրավունքի սուբյեկտի իրավունակությանը (իրավունքներ ու պարտականություններ կրելու ունակությանը), մինչդեռ խնդրո առարկա իրավակարգավորումը և ընդհանրապես Մեթոդիկան վերաբերում են լիցենզավորված սուբյեկտի՝ Ընկերության գործունակությանը, այսինքն՝ արդեն իսկ ճանաչված իրավունքի իրականացման մի պայմանի (որոշակի սակագնով գործարքներ իրականացնելու) կիրառման հիմնավորվածությանը կամ սահմաններին: Այսպիսով, 2020 թվականի ապրիլի 1-ի №106Ա որոշմամբ ճանաչվել է Ընկերության իրավունքը (իրավունակությունը)՝ նախ կառուցել լիցենզիայով սահմանված տարածքում

էլեկտրական էներգիա արտադրող կայան, որից հետո կառուցված կայանում արտադրել էլեկտրական էներգիա, և դրանից հետո միայն իրացնել արտադրված էլեկտրական էներգիան «Էներգետիկայի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված եղանակներով: Ընդ որում, որպեսզի Ընկերությունը հնարավորություն ունենա արտադրել էլեկտրական էներգիա և իրացնել այն վերը նշված եղանակով, անհրաժեշտ է նախ ավարտել Կայանի կառուցման աշխատանքները և արտադրության փուլ անցնելու նպատակով համապատասխան փաստաթղթերը, այդ թվում՝ սակագնի սահմանման հայտը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հանձնաժողով: Ինչից հետո միայն արտադրության փուլ անցնելու համար լիցենզիայի պայմաններում կկատարվեն համապատասխան փոփոխություններ և կսահմանվի սակագին: Այսպիսով, մինչև վերոնշյալ գործողությունների կատարումը սակագնի սահմանման իրավահարաբերություններ ծագել չեն կարող:

- Կարևոր է ընդգծել, որ քննարկվող իրավակարգավորումը ոչ թե բարելավում կամ վատթարացնում է Ընկերության իրավական վիճակը, այլ վերջինիս համար ստեղծում ընտրության հնարավորություն, այն է՝ կամ կայանը կառուցել Լիցենզիան ստանալու պայմաններով՝ լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած՝ փաստաթղթերով ներկայացված հողատարածքում և էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման պայմաններով՝ ունենալով տվյալ ժամանակահատվածի համար ձևավորված սակագինը՝ 25.052 ՀՀ դրամ/կվտժ, կամ կառուցել փոփոխված (ընդլայնված) հողատարածքում կամ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միանալ փոփոխված պայմաններով՝ ունենալով 10%-ով ցածր սակագին: Այսինքն՝ տնտեսվարող սուբյեկտը հնարավորություն ունի գնահատելու և նշված տարբերակներից ընտրելու իր համար առավել ընդունելի տարբերակը: Նշվածի համատեքստում Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ տվյալ դեպքում սակագնի առնչությամբ Ընկերության լեգիտիմ ակնկալիքները կարող են գործել Լիցենզիան ստանալու պայմաններով (այդ թվում՝ կայանի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքի, ինչպես նաև բաշխման ցանցին միացման լարման մասով), առավել ևս այն պարագայում, երբ Լիցենզիան տրամադրվել է հզորությունների որոշակի սահմանաչափ

սահմանված լինելու պայմաններում: Այսպիսով, Ընկերության կողմից սխալ է մեկնաբանվել ու ներկայացվել լեգիտիմ ակնկալիքի իրավունքի էությունը և, մասնավորապես, այդ իրավունքի ծագման նախադրյալներն ու պայմանները:

- Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված փաստարկներին՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի մայիսի 20-ին Ընկերությանը տրամադրված №ՏՊ-200-110/1375-Հ տեխնիկական պայմանի մասով, ինչպես նաև Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի №2 հավելվածի 1-ին կետի 8-րդ ենթակետի մեկնաբանությանը, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ այդ պահի դրությամբ դեռևս Մեթոդիկայի որևէ դրույթի կիրառման հարց չէր կարող քննարկվել: Բացի այդ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից Ընկերությանը տեխնիկական պայման տրամադրելու պահը տվյալ դեպքում չունի իրավաբանական նշանակություն Ընկերության ու Հանձնաժողովի միջև սակագնի սահմանման առնչությամբ ծագած իրավահարաբերությունների տեսանկյունից վերը շարադրված փաստարկների համատեքստում: Հարկ է նշել նաև, որ Հանձնաժողովի կողմից «նախնական տեխնիկական պայման» հասկացության փոփոխման հետ կապված Ընկերության պնդումներն ընդհանրապես վերաբերելի չեն սույն հարցին ու որևէ կերպ չեն կարող հիմնավորել Ընկերության պնդումները: Որպես բողոքի հիմնավորում չի կարող դիտվել նաև Ընկերության պնդումն այն մասին, որ Կայանի նախագծի ներկայացման պահին Հանձնաժողովն արդեն իսկ փոփոխված տեխնիկական պայմանի մասով դիտարկում չի ներկայացրել, քանզի նախագծի ուսումնասիրությունը սակագնի սահմանման հետ կապված իրավահարաբերությունների հետ չառնչվող առանձին գործընթաց է, և Հանձնաժողովն այդ փուլում որևէ պարտավորություն չի ունեցել հայտնելու որևէ դիտարկում տեխնիկական պայմանի փոփոխության վերաբերյալ, քանի որ դրա փոփոխությունն, ըստ էության, Ընկերության իրավունքն է, իսկ այդ իրավունքի իրացման հետևանքները, ինչպես արդեն նշվել է, վրա են հասնում սակագնի սահմանման գործընթացի շրջանակում:

գ. Որոշման փոփոխման կամ բեկանման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 77-րդ հոդվածով սահմանված հիմքերը բացակայում են, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել Որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ Ընկերության 2022 թվականի հոկտեմբերի 3-ի վարչական բողոքը:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- դեկտեմբերի 2022թ.